ՖԵԹՈՒԼԼԱՀ ԳՅՈՒԼԵՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅԻ ԹՅՈՒՐՔԱԼԵԶՈՒ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՄԻՆԱՍՅԱՆ Ն. Ա.

1990-ական թթ. սկզբներին Թուրքիան, ներթափանցելով Կենտրոնական Ասիայի տարածաշրջան, ձգտում էր հաստատվել թյուրքալեզու երկրների գաղափարական, քաղաքական, տնտեսական, կրթական, մշակութային բնագավառներում: Այդ նպատակին հասնելու համար Թուրքիայի ղեկավար շրջաններն օգտագործում էին ոչ միայն պետական միջոցները, այլ նաև երկրում առկա մյուս կազմակերպություններն ու ուժերը (հատկապես իսլամական ու պանթյուրքական բնույթի): Այդպիսի ուժերից էր նաև Ֆեթուլլահ Գյուլենի համայնքը:

Ֆ. Գյուլենը հայտնի Նուրջու (Nurcu) շարժումից է, որը հիմնադրել է թուրք իսլամական աստվածաբան Բեդիուզզաման Սայիդ Նուրսին[1]: Նուրսիի շարժումը նրա մահից հետո բաժանվում է տարբեր հոսանքների: Ամենաազդեցիկներից էր «Ֆեթիհջի» (Fetihci) խումբը կամ Ֆեթուլլահ Գյուլենի հետևորդներ կոչվող համայնքը: Վերջինս մեծ հեղինակություն էր վայելում Թուրքիայում ու նրա սահմաններից դուրս: Այս համայնքի մեջ մտնում էին մտավորականներ, խոշոր բիզնեսի ներկայացուցիչներ, լրագրողներ, ուսուցիչ-ներ, գրողներ և այլք: Համայնքի անդամները կոչվում էին քարոզիչներ, և յուրաքանչյուրը պետք է մատուցեր որոշակի ծառայություն, որով էլ որոշվում էր նրա ակտիվությունը:

Ֆ. Գյուլենը ծնվել է Էրզրում նահանգի Քորուջուկ գյուղում 1941 թ.[2]: Նրա հայացքների ձևավորմանը նպաստել է ընտանիքը, հատկապես՝ տատը: Գյուլենն իր կրթությունը ստացել է Էրզրումի հոգևոր կենտրոնում: Ավարտելուց հետո՝ 1958 թ., սկսում է դասավանդել Էդիրնեում, այնուհետև գնում է Իզմիր և հետագա գործունեությունն իրականացնում այնտեղ[3]: Գյուլենի շարժումն

---

[1] *Բեդիուզզաման Սայիդ Նուրսիի (1878-1960) շարժումն ուներ բավական ազդեցիկ գաղափարական ակունքներ. դրա գաղափարախոսությունը հիմնված է Սայիդ Նուրսիի հանրահայտ «Լույսի տրակտատը» (Risale-i nur) աշխատության վրա, որը պարունակում էր Ղուրանի մեկնաբանություններ՝ բաղկացած վեց հազար էջից: Այս շարժման հետևորդները մեծապես օգտագործում էին տպագիր մամուլը և ավանդական հոգևորական ցանցը: Նրանք Ղուրանը մեկնաբանում էին ժամանակակից գիտության և բանականության դիրքերից՝ փորձելով նոր շունչ հաղորդել Անատոլիայի փակ հասարակությանը: Այսինքն, շարժման գլխավոր մեկնարկը մահմեդական հասարակության երիտասարդացումն էր՝ Ղուրանի նոր մեկնաբանությամբ, իսկ նպատակը՝ գիտության և իսլամի համադրումը:*

[2] **Фетуллах Г.** *Пророк Мухаммад – венец рода человеческого, т. 1, М., 2004, с. XVI.*

[3] *Նույն տեղում, т. 2, М., 2004, с. XIV.*

սկսվում է Իզմիրում, ուստի այն շատերին հայտնի է «Իզմիրի հանրություն» անունով:

1990-ական թթ. Գյուլենի շարժումը լայն տարածում գտավ ու հաջողություն ունեցավ, որովհետև Թուրքիայում վերելք էին ապրում ժամանակակից իսլամական շարժումները: Գյուլենը լավ հարաբերություններ ուներ Թուրքիայի կառավարության և զինվորական վերնախավի հետ: Թուրքիայում իսլամիստների ակտիվության հետևանքով զինվորականությունը Գյուլենին ու նրա կազմակերպությունը որակեցին իբրև պետության հիմքերը խարխլողներ: 2001 թ. օգոստոսի 3-ին Գյուլենի դեմ քրեական գործ հարուցվեց՝ պետության աշխարհիկ իրավակարգը փոխելու մեղադրանքով: Գործի նախաքննության ընթացքում Գյուլենն առողջության վատթարացման պատրվակով լքեց Թուրքիան՝ քաղաքական ապաստան խնդրելով ԱՄՆ-ից, որտեղ և ապրում է մինչև օրս:

Գյուլենը, խմբագրելով Նուրջիի գաղափարական մոտեցումները, 1990-ական թթ., որպես թուրք հասարակության բարոյական առողջացման ու առաջընթացի կարևորագույն միջոց, առաջ քաշեց կրոնների երկխոսության, քաղաքացիական հասարակության կառուցման, կրթության ու տեղեկատվական տեխնոլոգիաների լայնածավալ օգտագործման անհրաժեշտության հարցը: Նա այն կարծիքին էր, որ իսլամը թուրքական հասարակության մեջ համարժեք ներկայացված չէ, ուստի մեծ տեղ էր հատկացնում կրոնին, այսինքն՝ իսլամին, գտնելով, որ այն պետք է միաձուլվի թուրքական ազգային գաղափարախոսությանը[4]: Նա դեմ էր շարիաթը պետության համակարգում օգտագործելուն՝ նշելով, որ այն հիմնականում վերաբերում է մարդկանց: Գյուլենը, որպես պետության կառավարման լավագույն նմուշ, նախ ընտրում էր ժողովրդավարական ձևը՝ կարևորելով Իրանի ու Սաուդյան Արաբիայի վարչաձևերը: Մեծ տեղ էր հատկացնում կրթությանը՝ այն համարելով առաջընթացի կարևոր պայման: Կրթության միջոցով նա փորձում էր ստեղծել ամբողջովին նոր վերնախավ: Կազմակերպությունն ուներ հեռագնա ռազմավարություն, այն է՝ միջամտել, որ տվյալ երկրի պետական համակարգի համեմատաբար բարձր պաշտոններում նշանակվեն սեփական ուսումնական հաստատությունների շրջանավարտները: Գյուլենը կողմնակից էր «թուրքական զարգացման նմուշաձևի» քաղաքականությանը (հատկապես նորանկախ թյուրքալեզու երկրներում) և կարծում էր, որ նրանք պետք է զարգանան աշխարհիկ սկզբունքներով, այսինքն՝ առանձնացնում էր ժողովրդավարության, աշխարհիկության ու ազատ շուկայական տնտեսության գաղափարները:

Գյուլենի նպատակն էր մուսուլմանական հասարակություն ստեղծելը, որը դեմ էր քաղաքական իսլամին, սակայն կողմնակից էր «ույալ

---

[4] **Aras Bülent** and **Caha Ömer**, *Fethullah Gulen and his Liberal "Turkish Islam" Movement (The Middle East Review of International Affairs (այսուհետև՝ MERIA), Vol. 4, N 4, December 2000, http://meria.idc.ac.il/journal/2000/issue4/aras-caha.pdf)*

իսլամիզմի» գաղափարին (Educational Islamism)[5]: Իսլամը և արդիականացումը պետք է համադրվեին:

Գյուլենը երկրում և նրա սահմաններից դուրս ստեղծել է գործող ՁԼՄ-ների և բիզնեսի հսկայական ցանց. նրան են պատկանում մի շարք ազդեցիկ զանգվածային լրատվամիջոցներ և հանդեսներ (Zaman, Today's Zaman, Zafer, Cihan Haber Ajansi, Sizinti, Aksiyon, The Fountain, Akademik Araştırmalar Dergisi, Avrasya Dergisi, Sızıntı Dergisi, Samanyolu TV, Mehtap TV, Selam TV, Burç FM, Dünya FM, և այլն)[6]: Բիզնեսի ոլորտում նրան են պատկանում «Işık Sigorta» ապահովագրական ընկերությունը, Bank Asya-ն (որն առավել հայտնի է Asya Finans անունով): Թուրքիայում և դրա սահմաններից դուրս մի քանի այլ հեղինակավոր գիտական ու ակադեմիական նախագծեր նույնպես ֆինանսավորվում են Գյուլենի կողմից, օրինակ՝ «Abant Platform»-ը, որը հարավ-արևմտյան Թուրքիայում պարբերաբար կլոր սեղաններ ու քննարկումներ է կազմակերպում երկրի կարևորագույն խնդիրների վերաբերյալ: Գրեթե նույն նպատակն են հետապնդում «Եվրասիական երկխոսության նախագիծը», «Աբրահամյան հանդիպումները» և «ՌՈՒՄԻ ֆորումը»[7]: Գյուլենին են պատկանում մշակութային օջախներ, ավագ դպրոցներ, համալսարաններ, հիմնադրամներ և հյուրանոցներ, ամառային ճամբարներ, համալսարանի նախապատրաստական կուրսեր, որոնք գործում են Թուրքիայում ու նրա սահմաններից դուրս: Նա իր կրթական ծրագրերին փորձում էր տալ միջազգային բնույթ: Այդ պատճառով էլ նրա դպրոցները տարածված էին նաև թուրքական համայնքներում՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Նիդեռլանդներում, Մոլդովայում, Բալկաններում[8], ինչպես նաև մահմեդական հանրապետություններում (հատկապես Ռուսաստանի Դաշնության կազմում գտնվող Դաղստանում, Կարաչի-Չերքեզիայում, Թաթարստանում ու Բաշկիրիայում)[9]: Նշենք, որ ՌԴ-ում Գյուլենի ցանցին պատկանող դպրոցների մեծ մասը 2001-2006 թթ. փակվեց, իսկ 2008 թ. ապրիլին երկրի վճռաբեկ դատարանը գլխավոր դատախազի միջնորդությամբ ՌԴ-ում Նուրջու կրոնական համայնքի գործունեությունը որակեց որպես ծայրահեղական, և այն արգելվեց երկրի տարածքում[10]:

1990-ական թթ. սկսած՝ Գյուլենն իր գործունեությունը ծավալեց նաև Կենտրոնական Ասիայի նորանկախ հանրապետություններում: Մեր

---

[5] **Park Bill.** *The Fethullah Gulen Movement, MERIA, Vol. 12, No. 3, September 2008,* http://www.meriajournal.com/en/asp/journal/2008/december/park/index.asp

[6] **Şener Nedim**. *Ergenenkon Belgelerinde Fethullah Gülen ve Cemáat, İstanbul, Destek Yayınevi, 2011, s. 119-200.*

[7] **Տեր-Մաթևոսյան Վ.,** *Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Ե., 2008, էջ 112:*

[8] *Գյուլենի համայնքը կամ հանրությունը հատկապես ակտիվ է Գերմանիայում՝ 1980-ական թթ. սկզբներից սկսած: 2001 թ. այն երկու ասոցիացիա ստեղծեց՝ Փարիզում և Ստրասբուրգում: Թուրքական համայնքի երեխաների համար կազմակերպվում են կիրակնօրյա դպրոցներ:*

[9] **Park Bill.** *The Fethullah Gulen Movement, նշվ. աշխ.:*

[10] **Տեր-Մաթևոսյան Վ.,** *նշվ. աշխ., էջ 113:*

կարծիքով՝ այս հարցում նրան օգնում էր թուրքական կառավարությունը: Նա փորձում էր բարձրացնել իսլամի դերը այդ երկրներում: Հարկ է նշել, որ իսլամի դերը խորհրդային վարչակարգի ժամանակ բավական թուլացել էր, փոխարենը Գյուլենը փորձում էր տարածել կրոնական հանդուրժողականության և երկխոսության իր գաղափարները[11]: Գյուլենի նպատակն էր Կենտրոնական Ասիայում ձևավորել իր համայնքը կամ հանրությունը (Cemaat): Նա այստեղ սկսեց գործել կրթության բնագավառում՝ բացելով դպրոցներ, լիցեյներ ու կրթական տարբեր կենտրոններ[12]: Նա կրթությունը համարում էր հզոր զենք, որի միջոցով կարելի է հասնել ազդեցության: Այս գործողություններում նրան գաղտնի աջակցում էր «Բարո- րություն» կուսակցությունը[13]: Թուրքիայի նախկին վարչապետ Բ. Էջևիթի կարծիքով, եթե չլիներ Գյուլենը, ապա Կովկասում ու Կենտրոնական Ասիայում կհաստատվեր Իրանի ազդեցությունը[14]:

1992-1993 թթ. Կենտրոնական Ասիայում բացվեցին Գյուլենի առաջին դպրոցները, որոնք բավականին ակտիվ էին: Ըստ երևույթին դա ուներ երկու պատճառ, նախ՝ նոր ու ջերմ հարաբերություններ էին սկսվել Թուրքիայի ու թյուրքալեզու երկրների միջև, եռանդուն քարոզվում էին «թուրքական զարգացման նմուշաձևի» և «թյուրք եղբայրության» գաղափարները, որոնք այս երկրներում արձագանքներ ունեցան և նպաստեցին Թուրքիայի հեղինակության բարձրացմանը, երկրորդ՝ Թուրքիայի նախագահ Թուրգութ Օզալն աջակցում էր Կենտրոնական Ասիայում իրականացվող գործողութ-յուններին, նաև Գյուլենի շարժմանը, այսինքն, վերջինս իր նպատակներն իրագործում էր՝ օգտվելով նաև պետության հովանավորությունից[15]:

Գյուլենն իր հսկայական բիզնես ցանցի միջոցով փորձում էր տարածաշրջանի գործարարներին ներգրավել իր կազմակերպություններում: Asya Finans-ը, լինելով համայնքի բանկը, օգնում էր կենտրոնասիական այն գործարարներին, որոնք շարժման հետևորդներ էին: Նրանց տրամադրում էր հսկայական վարկեր ու ֆինանսներ, կատարում նաև տարբեր տեսակի ներդրումներ: Միաժամանակ, ֆինանսավորում էր կազմակերպություններն ու դպրոցները: Թուրք գործարարները ևս (հատկապես Գյուլենի համայնքին պատկանողները) ֆինանսավորում էին Կենտրոնական Ասիայում գտնվող տարբեր հաստատությունները: Գյուլենի գաղափարները տարածելու համար լայն գործունեություն սկսեցին ծավալել նաև միսիոներները:

---

[11] **Ter-Matevosyan V.** *Islamic Socio-Political Movements in Turkey in the 1970-1990s, (Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, h. 7, Ե., 2011, էջ 216):*

[12] ***Ergil Doğu**, 100 Soruda Fethullah Gülen ve Hareketi, İstanbul, Timaş Yayınları, 2010, s. 310-311.*

[13] *Turkish Daily News, 13.VIII.1996.*

[14] *Radikal, 21.III.1998.*

[15] ***Balcı Bayram,** Fethullah Gülen's Missionary Schools in Central Asia and their Role in the Spreading of Turkism and Islam, Religion, State & Society, Vol. 31, 2003, No. 2, p. 154.*

Գյուլենի հովանավորությամբ Կենտրոնական Ասիայում իրենց գործունեությունն սկսեցին տարբեր հիմնադրամները (հիմնականում կրոնական բնույթի): Այնտեղ Գյուլենն ուներ հստակ նպատակ՝ տարածել իր շարժումը, և դա սկսում էր կրթությունից ու դպրոցներից: Գյուլենի ներկայացմամբ՝ այս դպրոցները գտնվում էին պետության հովանու ներքո: Այս դպրոցներին գրքեր, քարտեզներ, համակարգիչներ, լաբորատոր սարքավորումներ ու կրթական այլ պարագաներ տրամադրում էին թուրքական ընկերությունները: Արդեն 1991-1993 թթ. Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում գործում էին Գյուլենի դպրոցներն ու ընկերությունները: Հետխորհրդային տարածաշրջանում նրա դպրոցների թիվը հասնում էր 200-ի, որոնցից 150-ը գործում էին Կենտրոնական Ասիայում ու Կովկասում[16]: Նշենք, որ Գյուլենը, իրականացնելով իր՝ մտավորական խավ ստեղծելու գաղափարները, դպրոցներ էր հիմնում նաև ոչ մուսուլմանական և ոչ թյուրքական երկրներում[17]: Դարձյալ նպատակը նույն էր. իր սաները տվյալ երկրներում պետք է զբաղեցնեին բարձր պաշտոններ, որով էլ իրական հիմքեր կստեղծվեին իր գաղափարները իրականացնելու համար:

Մյուս կողմից՝ կարող ենք ասել, որ Կենտրոնական Ասիայում Նուրջու շարժման ներկայացուցիչները Գյուլենի կազմակերպություններն էին: Վերջիններս մեծ դեր էին կատարում Նուրջու շարժման վերաբերյալ գրականություն տարածելու գործում: Ստեղծվել էին տպագրական ընկերություններ ու գրախանութների ցանց, որոնք զբաղվում էին այս գործով: Կենտրոնական Ասիայում 1998-1999 թթ. Նուրջու ավելի քան 75 կրթական կենտրոններ հիմնադրվեցին, որոնք իրականում հովանավորվում էին Գյուլենի կողմից: Ըստ երևույթին, Նուրջու շարժումը Կենտրոնական Ասիայում միսիոներական բնույթ ուներ՝ նպատակադրվելով դարձյալ վերածնել իսլամը, որը նախկին 70 տարիների ընթացքում կորցրել էր իր դիրքերը: Անգամ այս շարժման մասին գրականությունը թարգմանվում էր կենտրոնասիական լեզուներով և տարածվում այդ երկրներում:

Կենտրոնական Ասիայում Գյուլենի շարժման անդամները կոչվում էին թուրքական սուֆիզմի հետևորդներ (Turkish Sufism) , և այդ տարածքը համարում էին թյուրքերի նախահայրենիքը[18]: Նրանք տարածում էին թյուրքական մշակույթը: Գյուլենի խումբը մյուս խմբերից տարբերվում էր իր իսլամական ինքնությամբ: Այն առաջին հերթին կրթական համակարգ էր, և այստեղ շեշտը դրվում էր, նախ՝ իսլամական ինքնության, ապա՝ նոր թյուրքականության վրա[19]: Կենտրոնական Ասիայում իսլամական խմբերը

---

[16] Turkish Daily News, 06.VI.1995.

[17] **Pope Huge**, Sons of The Conquerors. The Rise of the Turkic World, New York, Washington, London, 2005, p. 254.

[18] **Mustafa Sen.** Turkish Islamist Entrepreneurs in Central Asia in Prospect for Democracy in Central Asia, ed. Birgit N. Schylter, Istanbul, Swedish Research Institute, 2005, p. 253.

[19] Նույն տեղում, էջ 257:

բացում էին, այսպես կոչված, «Ղուրանի դպրոցներ», կառուցում մզկիթներ և իսլամի գաղափարների տարածման կենտրոններ[20]:

Գյուլենի շարժման մեջ ներգրավվեցին տարածաշրջանի գործարարները՝ ստեղծելով տարբեր ընկերություններ, այսպես՝ Ուզբեկստանում գործում էր Ուզբեկստանի ու Թուրքիայի գործարարների միությունը (Özbekistan ve Türkiye İşadamları Derneği), Ղրղզստանում՝ Ղրղզստանի ու Թուրքիայի գործարարների միությունը (Kırgızistan ve Türkiye İşadamları Derneği): Այս միությունների նպատակն էր երկու երկրների միջև զարգացնել առևտուրը: Թուրքմենստանում շարժման գործունեությունն օրենքով արգելված էր, սակայն այն տարբեր ուղիներով ներթափանցում էր երկիր, մասնավորապես ներդրումներ իրականացնելու տեսքով: Ղազախստանում գործում էր Ղազախստանի ու Թուրքիայի կրթական հիմնադրամը (Kazakistan ve Türkiye Eğitim Vakfı), որն ամբողջությամբ Նուրջու շարժումն էր ներկայացնում, գործում էր նաև Ղազախստանի ու Թուրքիայի գործարարների միությունը (Kazakistan ve Türkiye İşadamları Derneği)[21]: Վերջինս Գյուլենի գործարարների կողմից չէր վերահսկվում:

Կենտրոնական Ասիայի երկրներում Գյուլենի շարժման ու համայնքի ներկայությունը պահպանելու համար մեծ դերակատարում ուներ Zaman թերթը[22], որը Խորհրդային Միության փլուզումից անմիջապես հետո հրատարակվում էր այդ երկրների մայրաքաղաքներում՝ Բիշքեկում, Աշխաբադում ու Ալմաթիում: Zaman-ը հրատարակվում էր նաև Տաշքենդում, սակայն այն թուրքական մի շարք դպրոցների հետ փակվեց, երբ սրվեցին Անկարայի և Տաշքենդի հարաբերությունները: Թերթը, համատեղ աշխատելով Գյուլենի դրպրոցների ու կենտրոնների հետ, այս երկրներում քարոզում էր նրա գաղափարները: Գյուլենի դպրոցներում առաջին հերթին սովորում են նամազ (namaz), որը կատարում են մինչ դասերը սկսելը: Այս դպրոցներում սովորող աղջիկները կրում են գլխաշոր: Ամեն շաբաթ ուսանողները մեկ ժամ հատկացնում են կրոնի պատմությանը: Նրա դպրոցներն ու համալսարանները գործում են կենտրոնասիական բոլոր երկրներում: Արդեն 1990-ական թթ. վերջին Ադրբեջանում գործում էին Գյուլենի համայնքին պատկանող 11 ավագ դպրոցներ, Ղազախստանում՝ 27, Ղրղզստանում՝ 11, Թուրքմենստանում՝ 16 և Ուզբեկստանում՝ 18: Այս հանրապետություններում գործում էր Գյուլենի շարժմանը պատկանող մեկական համալսարան[23]:

---

[20] Նույն տեղում, էջ 253:

[21] **Balcı Bayram**, նշվ. աշխ., էջ 155-156:

[22] Zaman թերթում իրենց առանձին խորագրերն ունեն Ղազախստանի, Ղրղզստանի և Թուրքմենստանի նույն թերթի բաժինները, և ընդհանրապես թերթը միշտ անդրադառնում է Կենտրոնական Ասիայում տեղի ունեցող իրադարձություններին: Տե՛ս www.zaman.com.tr

[23] Turkish Ministry of Educational Statistics, http://www.meb.gov.tr/Stats/ist97/MYHTML45.htm , **Aras Bülent**, Turkey's Policy in the Former Soviet South: Assets and Options, Turkish Studies, 1:1, 2000, p. 36-58.

Նշենք, որ Կենտրոնական Ասիայի երկրներից Գյուլենի շարժման ազդեցությունը 1990-ական թթ. ավելի շատ նկատվում էր Ուզբեկստանում: Սակայն 2000 թ. թուրքական մյուս դպրոցների հետ Գյուլենի դպրոցներն ու գործունեությունը ևս արգելվեցին, ինչպես նշեցինք, կապված Տաշքենդի և Անկարայի հարաբերությունների վատթարացման հետ, երբ ուզբեկական ընդդիմության առաջնորդներ Մուհամադ Սալիհը և Աբդուրահման Փոլաթը, Ուզբեկստանից վտարվելով, ապաստան էին գտել Թուրքիայում[24]: Այս դեպքերից հետո նախագահ Ի. Քարիմովը կոշտ դիրքորոշում որդեգրեց Թուրքիայի նկատմամբ և սկսեց զարգացնել համագործակցությունը տարածաշրջանի մյուս երկրների, հատկապես Ռուսաստանի Դաշնության հետ:

Ներկայումս Գյուլենի համայնքն ամենաշատ թվով դպրոցներ ունի Ղազախստանում (29 ավագ դպրոց), որտեղ գործում է «Սու- լեյման Դեմիրել» համալսարանը: Գյուլենի գործունեությունը Ղազախստանում ունի հատուկ նպատակներ. Ղազախստանի ռուսական մեծ համայնքը թուլացնելով՝ խաթարել Ռուսաստանի դիրքերը, կրթելով դազախ երիտասարդներին՝ նրանց աջակցել իշխանության գլուխ անցնելուն, ձևավորելով թուրքամետ քաղաքական վերնախավ: Թուրքմենստանում և Ղրղզստանում գործում են 20-ական դպրոց և մեկական համալսարան, իսկ Ուզբեկստանում՝ ընդամենը մեկ դպրոց: Գյուլենն ուշադրություն դարձրեց նաև Տաջիկստանին. այսօր այս երկրում գործում է 13 դպրոց[25]: Այսինքն՝ Կենտրոնական Ասիայում նա կարողացել է իրականացնել իր համար կարևոր ծրագրերից մեկը. հիմնելով կրթական և ուսումնական հաստատություններ՝ ապահովել է նրանց գործունեությունը:

Նշենք, որ յուրաքանչյուր հանրապետությունում դպրոցները ղեկավարվում են տվյալ երկրում գործող Գլխավոր վարչության (Genel MƆdƆrlƆk) կողմից: Սրանք էլ, իրենց հերթին, ենթարկվում են Թուրքիայում գտնվող իրենց համապատասխան կենտրոնին: Օրինակ՝ Ուզբեկստանում գործող դպրոցը ղեկավարվում է «Silm Anonim Şirketi» կողմից, որի կենտրոնը գտնվում է Բուրսայում, Ղրղզստանում այդ գործն իրականացնում է «Sebat» («Adapazarı») ընկերությունը, Թուրքմենստանում՝ «Başkent»-ը, որոնց կենտրոններն Անկարայում են, իսկ Ղազախստանում՝ «Feza and Şelale» ընկերությունը, որի կենտրոնը գտնվում է Ստամբուլում: Այս բոլոր օջախները լավ հարաբերություններ ունեն Թուրքիայի լրագրողների և գրողների հիմնադրամի հետ[26]: Նշենք, որ Գլխավոր վարչությունը հիմնականում հետևում է քաղաքական անցուդարձին՝ ջանալով լավ հարաբերություններ ունենալ տվյալ երկրի ղեկավարության հետ:

---

[24] *Մուհամադ Սալիհը Ուզբեկստանում գործող Erk կուսակցության առաջնորդն էր, իսկ Աբդուրահման Փոլաթը՝ Birlik կուսակցության: Սրանք իսլամական կուսակցություններ էին և Ի. Քարիմովի դեմ մահափորձ կատարելու համար Ուզբեկստանից վտարվեցին:*

[25] **Ergil Doğu,** *նշվ. աշխ., էջ 320.*

[26] **Balcı Bayram**, *նշվ. աշխ., էջ 158:*

Գյուլենի շարժման կառուցվածքը հիերարխիկ է և, ըստ երևույթին, ոչ այնքան ժողովրդավարական, որն այնքան էլ հասկանալի չէ համայնքի լիբերալ հարաբերությունների և հանդուրժողականության պայմաններում: Գյուլենը շարժման միակ առաջնորդն ու գլխավորն է, իսկ ամենացածր աստիճանում գտնվում են, այսպես կոչված, «ավագ եղբայրները» (abiler):

Նրա դպրոցներում առանձնահատուկ ուշադրություն են դարձնում մասնագետների խնդրին, որոնք պետք է լինեն համայնքի անդամ և ընտրվեն հատուկ կարգով: Ուսուցիչները չպետք է լինեն որևէ մարզական խմբի կամ կուսակցության անդամ: Որպես ֆեթուլահջի՝ նրանք ընտրվում են հատուկ արարողակարգով՝ Գյուլենի գաղափարներին ինչ-որ ծառայություններ մատուցելով և պետք է լինեն համայնքի գործուն անդամներից: Այս ուսուցիչները ուսումը ստանում են Թուրքիայի կրթական լավագույն օջախներում ու համալսարաններում: Կենտրոնական Ասիայում, ըստ թուրք հետազոտող Բայրամ Բալջրի, իրենց կրթական գործունեությունն են ծավալում նաև, այսպես կոչված, տնային ուսուցիչները, որոնք օգնում են երեխաներին պատրաստելու դասերը և կոչվում են ավագ եղբայր (abi)[27]: Այս ուսուցիչները հատուկ պատրաստություն են անցնում Գյուլենի կազմակերպություններում: Կարելի է ասել, որ նրանք յուրահատուկ միսիոների դեր են կատարում յուրաքանչյուր ընտանիքում՝ տարածելով Գյուլենի գաղափարները:

Թուրք պաշտոնյաները (նախագահ, վարչապետ, նախարարներ) Կենտրոնական Ասիա կատարած այցելությունների ժամանակ անպայման լինում են նաև այս շարժմանը պատկանող դպրոցներում: Սա ցույց է տալիս, որ Թուրքիայի կառավարող շրջանները կարևորում են այս դպրոցների դերը Թուրքիայի ու կենտրոնասիական երկրների միջև հարաբերությունների զարգացման գործում:

Գյուլենի հաստատություններում կրթությունը իրականացվում է հիմնականում անգլերենով ու թուրքերենով: Պարտադիր ուսումնասիրվող առարկաների թվին են պատկանում կենսաբանությունը, մաթեմատիկան, ֆիզիկան, համակարգիչը: Յուրաքանչյուր երկրում այս դպրոցներից 1-2-ը մասնագիտացված են աստվածաբանության ուղղությամբ: Սրանք իրականում նույնությամբ կրկնում են Թուրքիայում գործող İmam Hatip լիցեյներին: Այս դպրոցներում աշակերտները սովորում են արաբերեն, Ղուրան և իսլամի պատմություն: Այսպիսի երկու դպրոց գործում է Ղազախստանում, մեկական՝ Թուրքմենստանում ու Ղրղզստանում, իսկ Ուզբեկստանում դպրոցը գտնվում է պետության հսկողության տակ:

1990-ական թթ. սկզբներին, երբ Գյուլենը կենտրոնասիական տարածաշրջանում բացում էր իր դպրոցները, ակտիվորեն համագործակցում էր թուրքական կառավարության և թյուրքալեզու երկրներում գտնվող դեսպանատների հետ: Սակայն այս համագործակցությունը հաճախ ուներ հակասական բնույթ, օրինակ՝ Ուզբեկստանում տեղի ունեցած վերոնշյալ

---

[27] *Նույն տեղում, էջ 159:*

դեպքերի հետ կապված (երբ Գյուլենի շարժումը որակվեց իսլամական և արգելվեց)՝ թուրքական կառավարությունը ոչինչ չձեռնարկեց: Ավելին, տարածաշրջանում սկսեցին բացվել դպրոցներ ու մշակութային կենտրոններ, որոնք ղեկավարվում էին Ազգային կրթության նախարարության, Բարձրագույն կրթության վարչության կողմից, բայց նրանց հովանավորում էին նաև թուրքական դեսպանատները:

Ֆ. Գյուլենը հաճախ է անդրադառնում Կենտրոնական Ասիային առնչվող իր նպատակներին: Նա նշում է, որ իր դպրոցները չեն համագործակցում թուրքական կառավարության հետ, որ նրանք անկախ են և նպատակ ունեն ձևավորելու մշակութային կամուրջ Թուրքիայի ու թյուրքալեզու երկրների միջև: Հավելենք, որ շարժումը թյուրքալեզու հանրապետություններում զբաղեցնում է հատուկ տեղ՝ ստեղծելով նոր արժեքներ, որոնք էլ միավորում են նրա հե-տևորդներին: Գյուլենի կազմակերպությունները տարածաշրջանում կատարում են գաղափարական քարոզչության դեր. թյուրքերին միավորելու համար օգտագործում են շարիաթի գաղափարները, որոնց հիմքում լինելու են Եվրասիայի թյուրքերը: Գյուլենի կենտրոններն ակտիվ են նաև Ռուսաստանում, հատկապես՝ Բաշկոր- տոստանում, Թաթարստանում, նաև Ղրիմում, Մոլդովայում: Այս կենտրոնների նպատակը տարբեր պետություններում մուսուլմանական շարժումները ղեկավարելն էր[28]:

Այսպիսով, Գյուլենի նպատակներից էին Կենտրոնական Ասիայի երկրներում իր գաղափարներով կրթական համակարգի կազմակերպումը, իսլամը վերականգնելը: Գյուլենի դպրոցները Կենտրոնական Ասիայում արդիական կրթության լավագույն օրինակներ են, մանավանդ որ տարածաշրջանը նման դպրոցների կարիք ունի: Նրա կրթական հաստատություններն այսօր գործում են կենտրոնասիական բոլոր երկրներում: Մյուս կողմից, Գյուլենն իր գաղափարները տարածելու տեսանկյունից, կարծում ենք, Կենտրոնական Ասիայում էական ձեռքբերումներ չունեցավ, քանի որ այս երկրների ղեկավարները դեմ են իսլամական և պանթյուրքական ամեն մի շարժման:

ДЕЯТЕЛЬНОСТЬ ФЕТУЛЛАХА ГЮЛЕНА В ТЮРКОЯЗЫЧНЫХ РЕСПУБЛИКАХ ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ

МИНАСЯН Н. А.

Резюме

В 1990-е годы в Турции идеологическое учение Фетуллаха Гюлена получило широкое распространение и пользовалось огромным успехом.

[28] **Kireev Nikolai.** *Turkey in Search of National Strategy of Eurasian Cooperation, Central Asia and the Caucasus, 2002, N 1 (13), p. 26.*

Вскоре оно стало популярным на постсоветском пространстве, в первую очередь, в тюркоязычных центральноазиатских республиках.

В тюркоязычных странах Центральной Азии деятельность Гюлена была направлена на сферу образования, открытие школ, лицеев, учебных центров, поскольку Гюлен придавал большое значение образованию в деле пропаганды идей ислама и пантюркизма. Это было связано с тем, что Гюлен считал образование мощным оружием, которое поможет достигнуть влияния. Гюлен владел огромной сетью предприятий в регионе, оказывая поддержку представителям бизнеса, вовлекая их в свою организацию. Однако идеи Гюлена не во всех странах Центральной Азии получили гражданство, поскольку лидеры этих стран выступали против тех или иных исламских и пантюркистских движений.

FETHULLAH GULEN'S ACTIVITIES
IN TURKIC REPUBLICS OF CENTRAL ASIA

N. MINASIAN

Abstract

In 1990's, Fethullah Gulen's movement attracted a large number of supporters. After a short period, this movement became popular both in Turkey and across its borders. Through the support of the Turkish Government, the movement became popular in the post-soviet territories as well, in the Turkic Republics of Central Asia in particular

In Central Asia, Gulen's main activities lay in the sphere of education where he established schools, lyceums, centers promoting his teachings. These activities were determined by the fact that Gulen considered education a powerful weapon for gaining influence. At the same time, having a large business network he involved businessmen of the region in his companies, offering them various kinds of support.

The author believes Gulen not to have any tangible achievements from the perspective of spreading his ideas in countries of Central Asia, because the heads of these countries were against any Islamic and pan-Turkic movements. Gulen succeeded in establishing a stable system in the sphere of education. It is worth motioning, though, that over the recent years, the educational institutions have been under the control of the Governments of the countries of Central Asia.